



Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
դատական դպրոցի  
կառավարման խորհրդի  
2013թ. հունվարի 18-ի թիվ 05/13 որոշման

## Կ Ա Ր Գ

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՍԲ ԲԱԺԻՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՐՏԱԶԵՐԹ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով անցկացվող արտահերթ որակավորման ստուգմանը մասնակցող հավակնորդի հանրագումարային միավորը /այսուհետ՝ հանրագումարային միավոր/ հաշվարկվում է գրավոր քննության յուրաքանչյուր խնդրի համար ստացած գնահատականի գումարմամբ:

Հավակնորդի հանրագումարային միավորը հրապարակելիս հրապարակվում է նաև յուրաքանչյուր խնդրի համար ստացած գնահատականը:

2. Հավակնորդի հանրագումարային միավորը հաշվարկվում է Ստուգման և գնահատման հանձնաժողովի կողմից:

3. Բողոքարկման դեպքում հավակնորդի հանրագումարային միավորը հաշվարկվում է Բողոքարկման հանձնաժողովի կողմից: